*Մարտի 2-ին*
ՕՄՕՆ-ականները սկսել են լայն գործողություններ ծավալել ԼՂԻՄ-ի տարածքում:

*Կարմիր* շուկա գյուղի անասնապահական կոմպլեքսից գողացել են մոտ 60 մատղաշ:

*Ծառնինգ* ավտոմատավորներ ներխուժել են Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի անասնապահական ֆերման, կապկպել են պահակի կնոջը, սպանել 65-ամյա Մելիքսեթ Ասրյանին, գողացել 70 անասուն:

*Մի քանի* տասնյակ ՕՄՕՆ-ականներ 4 Ուրալ մեքենայով Կասում-Իսմայիլով շրջանից հարձակման փորձ են արել Թալիշ գյուղի վրա: Ժամը 17-ից 19:00 անընդհատ կրակել են գյուղի վրա, զոհեր և վիրավորներ չկան:

*Ժամը* 20-ին Աղդամի շրջանի Ջնշի գյուղի կողմից կրակ են բացել Փառուխ գյուղի վրա, երկու անգամ կրակել են ականանետից: Տեղ հասած զինվորների վրա բացած կրակից նախնական տվյալների համաձայն վիրավորվել է մեկ զինվոր:

*Ժամը* 18:30-ին Վեյսալու (Մարտունու շրջան) գյուղի մոտ ՕՄՕՆ-ականները կրակ են բացել կցասայլակով տրակտորի վրա: 3 հոգի մահացել են (Յուրի Դադամյան, 1965 թ., Արթուր Դադամյան, 1960 թ., Մավրիկ Արզումանյան, 1957 թ.), երկու հոգի վիրավորվել: Մինչ այդ դեպքը Ֆիզուլիի սահմանագծում, ավտոմայրուղու վրա հայտնաբերվել է մի «Ժիգուլի», որի մեջ գտնվել են 3 ծանր վիրավոր ադրբեջանցիներ:

*Գիշերը* հրաձգություն է տեղի ունեցել Խոջավանդի և Մարտունու միջև: Սպանվել է 1 ադրբեջանցի:

*Երեկոյան*, Կուրոպատկինից կրակահերթ են տվել Մարտունու վրա:

*Մարտի 3-ին*, Ստեփանակերտում պայթեցվել է մի թուրքի տուն, որը մինչև այժմ ոչ փո-